

ԺԱՄԱՆԱԿԱԲԱՆԱԿԱՆ

Բ.

ԲՈՒՆ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ: (2) ՓՐԿՉԱԿԱՆ
ԹՈՒԱԿԱՆ:

1. — Ներկայ տարւոյս մեր Ազգային Օրացցյաների մէջ տեսնում ենք բուռն Հայոց, 4418 », որ նաև ծանօթ է որպէս Հայկայ Շրջան, Հետեարար, ազգը բնաւորութիւնն անկանում է յամին 2492. Ն. Ք. (4418-1926 = 2492): Յայտնապէս յոյժ գուռարին է, թէ ոչ անկարելի, ասել թէ ի՞նչ հիմանց վերայ հաստատեցաւ այս: Ըստ մեր ազգային աւանդական Պատմագրութեանց (որպէս և տեսնում ենք Գամշեան Հայոց Պատմութեան մէջ), Հայկայ մեկնում թարելնէն և բնակութեան Հարաւային Հայաստանում՝ յիշուած է որպէս 2247. Ն. Ք. Թուականին, և նորա պատերազմ ընդդէմ թէլայ որպէս յամին 2108. Ն. Ք. որ վերջինն, նոյնպէս ըստ մեր աւանդական պատմութեանց, համարուած է նաևս որպէս Հայկագեանց Հարստութեան սկզբնաւորութեան թուականն: Արեմ, մեր բուն թուականն ի՞նչպէս զետեղցաւ յամին 2492. Ն. Ք: Տարակուսիմք ի պատասխանել, միայն թէ, ըստ մեր կարծեաց, հետեւել ենթադրական տրամարանութեամբ: Եօթանասուն թարգմանիչըն, ըստ ժամանակագրութեան իրեանց (զոր Հայկական Եկեղեցին որդեգրած է), Արարագործութեան թուականն հաշուեցին որպէս 5425, Ն. Ք. և ջրհեղինն որպէս 3163, Ն. Ք: Ժամանակամիջոցն, ի մէջ վերջնոյն և 2492. Ն. Ք. Թուականին, 671 տարի է (3163-2492 = 671): Մեր հնագոյն Պատմութիւնց երեց սերունդց են յիշում ընդ մէջ նոյի և ծննդեանն Հայկայ, այսինքն, Յարեթ, Գամեր և Թորգոմա, որոց ոմանց հասակներն յիշատակուած չեն Հին հտակարանում ինչպէս նախորդ Նահապետացն: Ուստի, անհաւանական չթուի մեզ որ մեր նախահարը՝ միջին հաշիւ մի որդեգրեցին յիշեալ երեց

Նահապետաց տիոց առընչովթեամբ, 671 տարի ընդունելով որպէս համագումարն, ըստ ժամանակին պատմագրեալ չափութեարութեան կենաց մարդոյ: Իթէ այս յաւակնութիւնն ընդունելի լինի որպէս ոչ բոլորովին խոտելի, ուրեմն, թերեւս, այդ լուծումն լինի 2492 Ն. Ք. Թուականին, որպէս թուական Հայոց, կապակցեալ ընդ անուանն Հայկայ: Բայց, այդու ամենայնիւ, պատրաստ եմք հպատակ թողուլ զայն մասնագիտաց ստուգագոյն վճռողութեանց:

Իսկ և իսկ' ի պակասութենէ վաւերականութեան է, որ Օտարազգիք՝ սոյն մեր թուականն կոչեցին ՏԱՅՍԵ, այսինքն անորոշ կամ անհաստատ թայց որ Ազգի թուականն է, թէ Արեւելիան թէ՝ Արեւմուսան, թէ՝ մշտառե թէ՝ անցուական, որ, հիմնեալ աւանդութեանց վերայ, առարկայ չէ եղած երկրայութեան, երբ ենթարկեալ ըննական խուզարկութեանց: Զոր օրինակ, Հնդկաց Բազմանիւղեան Հին թուականն, Հին Եղիպատացւոցն, Հելլենացւոց քառամեայ Կըրկնութեամբ Ալիմպիականն (սկզբնաւորեալ 776. Ն. Ք.), Հռովմէացւոցն (սկզբնաւորեալ Հռովմայ առասպելախանն Հիմարկութենէն, 753. Ն. Ք.), և որց ի սոցին կարգի: Վասն որոյ, թէպէտե գիտեմք որ մեր թուականն դեռ կարօտի ճշգրտման, հարկ չէ որ Օտարազգիք, կոչելով զայն անորոշ, համարեն որպէս թէ ասանձնայատուկ ստորոգութիւն մի է այն մեր Ազգի համար միայն: Մինչև անգամ Քրիստոնեայ Ազգաց մէջ ընդհանրացեալ Փրկչական թուականն ևս վիճաբանութեան առարկայ եղած է:

2. — ՓՐԿՉԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ: — Ինչպէս որ այս տողես գրելոյս միջոցին, շահագրգիռ զուգադիպութեամբ՝ Կարդացի «ԿՈՉՆԱԼԻ» Հանդիսի մի համառոտ խմբագրականին մէջ (Ցեղ, 1926, թիւ 2.), ներկայ տարւոյս թուականն 1926 է թէ 1930, առ որ Յարգելի խմբագրին հաւաստէ թէ «Ներկայ 1926 թուականն է իսկապէս՝ 1930»: Ուրիշ տրամարանց

սորա հակառակն են հաստատում: Աւստի, մը մէկն է ուղիղն:

Թոստովանելով հանդերձ որ իմ դիտաւորութիւնն չէ ցննադատ հանդիսանաւ՝ այլ լոկ ճառող վկայութեանց գիտնոցն անցելոց, նախ և յառաջ յիշեմք որ Յուլեան Տօմարն, հաստատեալ ի Յուլիոս կեսարէ՛ ցառասուն և հինգ ամօց նախ քան զՔրիստոս, որչափ որ մեց գիտակից եղաց, ու և մասնակցութիւն կամ ապդեցութիւն չունէր առնչութեամբ Փըրկչական Թուականին հաստատման: Նախ քան զՔրիստոս կեսար, Հռովմայեցից գործ էին ածում Նումա Պոմպիլիոսի հնագոյն Տօմարն, որ բոլորովին Լուսնական հաշիների վերայ հիմնեալ լինելով (զոր ժամանակին վարչապետ և Մագիստրոսց երկարէին կամ կարճեցուցանէին ըստ քամահաճոյից), տեղի տուած էր Տօմարական մեծ խառնաշփոթութեանց: Երբ Յուլիոս կեսար ձեռնարկեց հնոյն թարեփոխութ, իւրն օգնական ունեցաւ Սոսիգենէս Եզիդապացի հոչակաւոր Աստեղաբանն, որ խորին ճշգութեամբ՝ հաստատեց և ներութեց Արեգակնային Տարչին Յուլիոս Տօմարին մէջ, այն է Երկրին հուրվման ժամանակն՝ Արեգակն շուրջն, 365^{1/4} օր առ տարին: Գիտեմք որ տասնավեց դար անցան, մինչէ, շնորհիւ գիտութեանց յառաջադիմութեան, հմտագոյն Աստեղագէտք զիտեցին իրը տասն և մի վայրկեան սխալութիւն, առ տարին, այդ հաշոյն մէջ, որով և հաստատեցաւ Գրիգորեան կամ Նոր Տօմարն: Սակայն, ունելով ի մտի ժամանակին հանգամանքներն, Սոսիգենէսի Աստեղագիտական անժմտելի հմտութիւնն միայն կարող ենց կոչել հիմնալի, ըստ որում ի նմանէ հաստատեալ Արեգակնային Տարին (365 օր առ երեք հասարակ տարին և 366 օր առ նահանջ տարին), մինչ ցայսօր իսկ՝ դեռ մեց գործ ենց ածում վասն պիտոյից քաղաքային գործառնութեանց: Բայց, որպէս ասացինք, Յուլիան Տօմարն, ինքնին, ոչինչ առնչութիւն ունէր Փըրկչական Թուականին սկզբնաւորութեան

հետ՝ որպէս ոմանք կարծել թուին: Սակայն, գոյ ուրիշ մի տարր, Յուլիան ըիս կամ Երշան կոչուած, որ մեծ զեր ունեցաւ Յամին Մարդեղութեան թուականին հաստատման մէջ, զորմէ ունիմք խօսել ի ներըոյ:

Փրկչական թուականն հիմնեցաւ Յամին 525, թ. Ք. ձեռամք Հռովմայեցի գիտնական և նշանաւոր ժամանակարան Դիոնիսիոս կրտսեր Արքայի, որ գրեթէ մի և կէս դար տեսեց մինչև Քրիստոնեայ Ազգերն, տեղի տալով իւրեանց պահպանողական նախապաշարմանց և կասկածանաց, սկսեցին տակաւ առ տակաւ ընդհանրապէս գործ ածել զայն, փոխան իւրեանց սեփական տարրեր յիւրեաց Ազգային թուականներին: Մանրակրկիտ հաշուերանութեամբ, Դիոնիսիոս հիմնեց Քրիստոսի Ծննդնդն յամին 753 ի Հիմնարկութենէն Հռովմայ, և 194րդ Ալմապիականին յամին չորրորդ: Ուրիշ մի շատ կարենոր փաստ, յառաջ բերած յաշողակ Դիոնիսիան ժամանակարանութեանն, այն է որ Գրիստոսի Ծննդնդն դիպեցաւ Յուլիեան Երջանի յամին 4713: Այս Երջանն Տօմարական է և բովանդակում է. 7980 տարից: Եթէ ի միասին բազմապատկենց 28, 19 և 15 (այսինքն՝ Արեգակնային, Լուսնական կամ Մետոննեան, և Հռովմական ընդիկատուն շրջաններն), գտանում ենց 7980: Ու է ասել՝ 7980 տարի միջոց պիտի հոլովի, մինչև այդ երեք Երջանների սկիզբներն վերստին հասանեն նոյն կարգաւորութեանն, Յուլիան Երջան կոչուեցաւ որովհետեւ՝ հաշիւն Յուլիոս կեսարի Արեգակնային տարւոյ չափուն վերայ է կազմուած: Արդ, Դիոնիսիանց վճռական են համարում մեր ներկայէն Փրկչական թուականն, այնու արամարանութեամբ թէ Գրիստոս ծնաւ յամին 4713, Յուլիեան Երջանի, որովհետև երեսուն և երեք տարի զկնի, այն է, յիշեալ Երջանի յամին 4746, Զատկական Լուսնոյ լրում, իրաց, անկաւ Ապրիլի Յիւն, օրն Ուրբաթ, և համապատասխան ընդ Հրէկից Պատերին որ և խաշելութեանն Գրիստոսի, և որպէս

ապացոյց՝ յայտնում են որ, ըստ թու-
լեան անվիճելի Տօմարական Շրջանին,
Լուսնոյ լրում՝ յատու ուրբարու, չէ զի-
պուր, բազում ամօք, թէ նախ և թէ
զինի 4746 յամին Յուլիան Շրջանի:
Հակառակ կողմ պնդում է թէ Պատերի
Լուսնոյ լրումն, որ զուգագէպ էր ընդ
աւուր ուրբաթու, տեղու ունեցաւ Յամին
29. թ. Ք. (ըստ ներկայէս գործածական
թուականին), և զի Դրիստոռ երեսուն և
երեք ամաց հասակի էր երր առաջեցաւ,
Նորա Ծնունդն պէտք է եղած լինի չորս
ամօք յառաջ քան մեզ ծանօթ Յամին
Տեսան Ազգանորութեան: Մական, դի-
տելի է որ այս վերջին դաւանութեան
միոյն ընդդէմ զոն երեցին փաստարա-
նութիւնը յաջողակ Դիոնիսեան Դպրոցին:

Դիոնիսեանց յառաջ են թերուու, նաև,
Կտակարանական վկայութիւն մի՛ ի նե-
ցովկ իւրեանց փատուին, որ լոկ ի կու-
մանէ հետարբերական շահեկանութեան՝
ոչ անառօտան համարիմ յառաջի ածել
աստանօր, և այդ է, Դամիէլի Մարգա-
րէութիւնն (Դան. Թ. 24-27, «Խօթա-
նասուն հօմներորդք համառուեցան ի վե-
րայ ժողովրդեան ըյոյ», և այլն), զոր
յարաւելով, հանդեր փոխելով «շարաթն
առ «տարի », թարգմանեն թէ նշանակէ
490 տարի զինի վերահաստատման Հրէից
Բան Կրօնի և Օրինաց՝ յերուազէմ, Մե-
սիային կենացն ունի վերջանալ (քարձցի
օծութիւնն », ըստ Հայերէն Կտակարանի):
Սողոմոնի Տաճարն այրեցաւ ի նարու-
գողոնոսորէ յամին 586. Ն. Ք. ի բր
Հրէայց վերեվարեցան ի Բարելոն: Կիւ-
րոս ափրեց զիարելոն յամին 538. Ն. Ք.:
Յամին Երկրորդի Դարեն Վշտասպեան
Արքայի, այսինքն, Ն. Ք. 519ին, նոր
Տաճարի հիմնարկութիւնն սկսաւ ձեռամբ
Զօրաբարելի, որոյ նաւակատիքն եղեւ ի
թիւն 516. Ն. Ք. ի թուականէն 586

մինչեւ 516, Ն. Ք. եօթանասնամեայ մի-
ջոցն էր գերութեանն Հրէից ի Բարելոն: Հումին էր գերութեանն Հրէից ի Բարելոն: Յամին եօթներորդի Արտաշէսի արքային Պարսից, այսինքն, Ն. Ք. 458ին, Եզրաս
քահանայն (ընկերակցութեամբ Նէեմաս հայրեննասիրին) ստացաւ Արտաշէսի հըռ-
չակաւոր «Հրովարտակ» (Ցիւ, Գիրք Բ.
Եղուայ, Գլ. է.), արտօնելով վերահաս-
տառումն Հրէից կրօնի և Մովսիսական
Օրինաց և Կտարելու վերաշինութիւնն
Երուսալէմ քաղաքի: Այս թուականն
(458. Ն. Ք.) զուգազիպութիւնն է Դա-
նիէլի Մարգարէութեանն: Ըստ Դուկասու
(Գլ. Դ. 23), Մկրտութիւն Տեսան մերոյ
(երր երեսներորդ ամաց հասակին մէջ էր)
տեղի ունեցաւ յամին հնդիտասաներորդի
Տիրերեայ Կայսերն Հռովմայեցւց (որ
թագաւորեան 767-790, ի Հիւանարկու-
թենէն Հռովմայ Կամ 14-37, Յ. Ք.),
այն է, յամին Փրկչական 29, զինի որոյ,
ըստ շորեսին Աւետարանչացն, Քրիստոսի
քարոզութիւնն տեսց երեք տարի, և յե-
տոյ եկն Նորա Մահն: Ըստի, 458
+ 29 + 3 = 490:

Եթէ ոմանց անհամոզելի գտանեն բոլոր
փաստարանութիւնն յաջողակ մեր ներ-
կայէս Փրկչական թուականի ճշղութեանն,
նոյնչափ մահամոզելի են նոցա հաջուե-
րանութիւնն՝ որը զետեղում են Քրիստոսի
Ծնունդն չորս տարի յառաջ: Երր, եր-
կուստեղ, հակաճառում են, իւրացանչիւրն
պնդելով թէ իոր լիտրն ուղիղ կշռն է, և
չունելով հանդերձ Քրիստոսի Ծնունդն
ժամանակակից արձանագրութիւնը, և
բաւարար եմ իմ քուէն արկանել մեծա-
մասնութեան հետ՝ յաջողակ ներկայէս
թուականին, նա մանաւանդ զի բազմա-
զարեան գործածութիւն յինքեան կը զրա-
ւական վաւերականութիւն վասն մեր: Qui
nimium probat nihil probat.

Լուսնուն

Ս. Տէր Մ. Գրիգորես